կանթեղի առջեւ, խարխուլ եւ հնացած տախտակների վրայ, որոնք նրա գրասեղանն էին կազմում: Նրանց վառարանում յաճախ կրակ չէր վառւում, եւ պատանին շատ անգամ էր վաղում կրակ բերելու իրենց տանն ապրող վարձակալի վառարանից կամ թէ տաքանում էր հէնց նրանց վառարանի մօտ կուչ գալով...

Զքաւոր երկաթագործը հազիւ էր կարողանում ցամաք հաց հայթայթել իր բազմանդամ ընտանիքի համար: Դուրեանի մայրը չափից դուրս աշխատասէր եւ վշտոտ կին էր, բայց նա իր վշտերը կրում էր իր մէջ եւ ուրիշներին չէր յայտնում եւ երբեք լաց չէր լինում:

Մայրը շատ խոր կերպով ազդել է Պետրոսի նկարագրի եւ բնաւորութեան վրայ: Մէկ անգամ միայն հիւանդ որդին տեսաւ մօր արտասուքը եւ այն անմահացրեց հայ բանաստեղծութեան ամենագողտրիկ տողերով՝ «Տըրտունջք»ով:

Այնքան աղքատ էր եղել երկաթագործ Աբրահամը, որ չէր կարողացել գոնէ մի խաղալիք գնել իր որդի Պետրոսի համար: Եւ թըշուառ երեխան սպասում էր, թէ ե՞րբ պէտք է մայրը գուլպայ գործելիս սխալմամբ թելի կծիկը գլորէ գետին, որ ինքը հրճուանքով լի մի քանի վայրկեան գոնէ խաղայ...

Դուրեանի հայրը բարի, աշխատասէր եւ պահպանողական մարդ էր: Դուրեանը վեց տարեկան հասակում մանում է իրենց թաղի՝ ըՍկիւտարի ճեմարանը, որտեղ տիրում էր սքոլաստիկ ոգին: Այդտեղ դրաբար լեզուով աւանդում էին քերականութիւն, ճարտասանութիւն, Նարեկ, սաղմոս, աւետարան, Եղիշէ եւայլն: Դուրեանը յատկապէս շատ է սիրել Գրիգոր Նարեկացուն եւ շարունակ ուսումնասիրել է նրա մտքերը, զգացմունքները եւ արտայայտութեան ձեւերը: Մեծ նմանութիւն կայ այդ երկու վիրաւոր, անկեղծ եւ ողբերգակ երգիչների՝ Նարեկացու եւ Դուրեանի միջեւ:

Դպրոցում Դուրեանը ծանօթացաւ Արսէն Բագրատունու, Ղեւոնդ Ալիշանի եւ Պեշիկթաշլեանի հետ: Որոշ չափով նա ազդուեց դրանց գրուածքներից եւ վաղ հասակում, 13 տարեկանից, սկսեց գրել բանաստեղծութիւններ, որոնց մասին աննպաստ չէր արտայայտւում Սկիւտարի մի ժամանակուայ տեսուչ՝ հռչակաւոր երգիծաբան՝ Յակոբ Պարոնեանը:

Դուրեանի սիրած առարկաներն են եղել՝ հայերէնը, գրականութիւնը, երաժշտութիւնը, աշխարհագրութիւնը եւ նկարչութիւնը: Օտար լեզուներից նա սովորեց ֆրանսերէնը եւ պէտք է ենթադրել, որ նա այնքան գիտէր, որ կարողանում էր օգտուել ֆրանսական ռոմանտիկ գրողներից:

Ճեմարանում յաճախ տեղի ունեցող ատենաբանութիւնների ժամանակ Դուրեանն աչքի էր ընկել իր ճարտասանական ընդունակութեամբ եւ յստակ ու գեղեցիկ առոգանութեամբ: Աղքատութիւնը ստիպել էր ծնողներին հանել դպրոցից Պետրոսին եւ տալ դեղագործի աշկերտ, որպէսզի նա այդ գործնական արհեստով կարողանայ թէ՛ իր գլուխը պահել եւ թէ՛ օգնել ընտանիքին: Սակայն, դեղատանը նա չի ոգեւորւում դեղեր պատրաստելով, այլ շարունակ բանաստեղծութիւններ է յօրինում, որովհետեւ այդ էր նրա կոչումը, նա դրա համար էր ծնուել: Ծնողները չուտով հարկադրուած են լինում դարձեալ նրան ուղարկելու ճեմարան, որ եւ աւարտում է նա 1867 թուին՝ սովորելով ընդամէնը տասը տարի:

Դպրոցից նա դուրս է գալիս մտաւոր մի համեստ պաշարով, ծանօթացած լինելով հայ եւ օտար, գլխաւորապէս ֆրանսական գրականութեան հետ:

Այս անգամ ծնողները նրան գնում են մի սեղանաւորի մօտ, ուր ինն ամիս է մնում եւ զբաղւում է գրագրութեամբ: Սակայն, իր պաշտօնով զարձեալ չի ոգեւորւում եւ չի յառաջադիմում, որովհետեւ ուշքն ու միտքը իր բանաստեղծութիւններով եւ թատերգութիւններով էր զբաղեցնում: Ծնողները, որ նրան ուզում էին պատրաստել գործնական կեանքի համար, յաճախ հարցնում էին.

«Պետրոս, ասանկ գրելով-կարդալով ի՞նչ պիտի ըլլաս»:

Նա պատասխանում էր.

«Այսպէս ընելով իմ անունս պիտի հանեմ. թէեւ շատ չպիտի ապրիմ, բայց ըսել պիտի ասմ, թէ ասանկ մէկը աշխարհ եկած է»...

Այնուհետեւ Խորէն Նարպէյի ջանքերով Դուրեանը մասնաւոր դասեր է տալիս եւ այդ-